ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ՆՈՅԵՄԲԵՐ 1, թիւ 20. ԱՄԲՈՂՋ թիւ 141

The Haik,

A Journal devoted to Armenia, Armenians, and Oriental Peoples.

Edited by M. S. GABRIEL, M. D.
at 341 West 23rd St., New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական նշմարք.—The Armenians are For Seth Low.—Բացուած է Հայքի բաժանորդագրութիւնը.—History of Philosophy.—Հայ երիտասարդին ահագին կարևորութիւնը՝—Դեղագործ.—Ցառաջիկայ քաղաքային ընտրութիւնք Մեծագոյն Նիւ Եորկում.—Վիճակագրութիւն Ամերիկայի Հայոց.—Բարեգործական Ընկերութիւն Հայոց ի Նիւ Եորք.—Այլևայլք.—

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Կը խնդրենք մեր Ամերիկայի գաղթականութիւններէն փութացնել իրենց տեղական վիճակագրոց պատրաստութիւնն որպէս զի անյապաղ հրատարակուին ՀԱՅԿԻ մէջ և ամբողջանայ գործը։

Հայ երիտասարդին ահագին կարևորութիւնը ցուցնող մեր ատենախօսութիւնը զոր կը հրատարակենք ներկայ թուով՝ կը յուսանք ամեն հայ երիտասարդ և երիտասարդուհի ուշադրութեամբ պիտի կարդայ։

***



SETH LOW ՍԷԹ ԼՕ

(The Armenians are for SETH LOW)

Մեծագոյն Նիւ Եորք քաղաքի առաջին քաղաքապետի ընտրական պայքարն անհուն եռանդով կը մղուի և Հայերն ալ յարգելի դիրք մը գրաւելու վրայ են կողմնակցելով ՍԷԹՀ ԼՕՑԻ որ ամենալաւ ընտրելին է, անկախ, հանրային իրին անձնուէր, լուսամիտ և ազնիւ մարդ։ Եթէ ամեն քաղաքացի Հայ իւր քուէն տայ այս պատուական մարդուն, Հայ գաղթականութիւնը մատնանիշ պիտի լինի բոլոր երկրին մէջ իրրև ողջամիտ և լուրջ հասարակութիւն։ Ցառաջիկայ շաբաթ երեկոյ (Հոկտ. 30), մասմիթինկ մը պիտի լինի Հայոց, և այս խնդրոյն վրայ պիտի խօսին նշանաւոր Ամերիկացիներ և Հայեր։ Ամեն Հայ յուսանք պիտի փութայ այդ ժողովին ներկայ լինիլ և իւր ջերմ համակրութիւն ցոյց տալ Վսեմ. ՍԷԹՀ ԼՕՑԻ։

***

Բացուած է Հայքի ութերորդ տարւոյ բաժանորդագրութիւնը

ՀԱՅՔԸ

պիտի հրատարակուի 1898ին
ինչպէս այս տարի
ամսին երկու անգամ
տարեկան բաժանորդագինն է
երկու տոլար
կամ
տասը ֆրանք
ամեն երկրաց համար
վճարումը կանխիկ է

Դրամ կրնայ յղուիլ մընի օրտըրով, մանտա մը փոսթով, փոխ—գրով, կամ ապահովագրեալ նամակի ծոցով Փռանսական դէմպռ բօսթ ուղարկելով առ խմբագիրն

Dr. M. S. Gabriel
341 West 23d st., New—York

Ցղմունք մեզի կը հասնին եթէ նոյն իսկ սա պարզ հասցէով ուղղուին—Editor of Haik, New York, E. U. d'Ame'rique

Կը յուսանք թէ օտար երկիրներու մեր յարգոյ բաժանորդները պիտի փութան, ինչպէս իրենցմէ շատերուն բարի սովորութիւնն է, յղել մեզ իրենց բաժանորդագինը, այնպէս որ Յունուարէն առաջ մեր ձեռքը հասնի։

Շնորհակալութեամբ ստացած ենք հետևեալ անգլիերէն գիրքը—

HISTORY OF PHILOSOPHY
by
Alfred Weber
Professor in the university of Strasburg·
Authorized translation by Frank Thilly, A· M., Ph. D.
From the fifth French Edition
New York, Charles Scribner's Sons
1897,
630 երես, գին $2·50

Այս գիրքը բարձրագոյն կարգի հայ ուսանողաց ուշադրութեանը կը յանձնարարենք իբրև լաւագոյնը մինչև ցարդ երևցածներուն։ Ոճը յստակ է, և փիլիսոփայութեան պատմութիւնը մինչև Գօնթ, Սփէնսէր և Տարուին կը հասցնէ, Արդի Փիլիսոփայութեան պատմութեանը նուիրելով 345 երես։

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ԱՀԱԳԻՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մ· Ս· ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

Ի ՀԱՆԴԻՍԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՅՈՑ ԼՍԱՐԱՆԻՆ
Ի ՈՒԷՍԹ ՀՕՊՕՔԸՆ, Ն·Ճ·
Ի 10 Հոկտ· 1897

Սիրելի հայրենակիցներ,

Շնորհակալ եմ որ հրաւիրեցիք զիս մասնակցիլ Ձեր Լսարանի բացման հանդիսին, և շատ գոհ եմ որ կրցայ գալ։ Արդարև կ'արժէր Նիւ Եօրքէն մինչև հոս ուղևորել լսել սա զմայլելի դաշնակը և յաւէրժական երգն Ազատութեան։ Ձեմ զարմանար տեսնելով աստ ուրիշ ազգայիններ ալ Նիւ Եօրքէն եկած։ Միայն կը մնայ ինձ ջանալ ձեր ջերմ ընդունելութեան և սրտայոյզ նուագին փոխարէնը հատուցանել քանի մը քաջալերական խորհրդածութիւններով։

Այս ձեր ձեռնարկը մեծ նշանակութիւն ունի· Հայ երիտասարդը ահագին կարևորութիւն ունի այսօր —աւանիկ միտքը զոր կը փափաքիմ պարզել ձեզ այս առթիւ։

Հայ լինիլ այսօր աւելի կարևոր մարդ լինել է քան Անգլիացի, Ֆռանսացի, Գերմանացի կամ Ամերիկացի լինիլ։

Ամերիկա, Գերմանիա, Ֆռանսա ու ամեն այլ ազգք այսօր մեզ կը դիտեն։ Ամեն ազգաց խորհող անհատներն մեզ կ'ուսումնասիրեն, և որքան աւելի խորհող են այնքան աւելի խորին հետաքրքրութեամբ մեզի դէտակն ունին, վասն զի այս վերջին 25 տարուան մէջ, և մէկ ընկատմամբ մը ազգաց պատմութեան սկիզբէն ի վեր, ազգային դէպք մը պատահած չէր որ Հայաստանի նորալուր դէպքերուն չափ զարհուրելի և միանգամայն զարմանալի լինէր։ Հայաստան տեսած է պարսկական, արաբական, թրքական արշաւանքներ որք ահաւոր փոթորիկներու պէս անցած են արիւն և աւեր սփռելով· բայց վերջին թրքական արշաւանքը ոչ փոթորիկի կրնանք նմանցնել, ոչ հեղեղի և ոչ ժանտախտի, զի դոքա կ'անցնին կ'երթան, մինչ ներկայ օսմանեան չա-

րիքը չի անցնիր, վասն զի դրսէն չէ եկած, այլ Համիրի իբր մոգական մէկ նշանին վրայ մեր շուրջը գտնուող և իբր ըղձացի, ընկեր ու բարեկամ մեզի հետ ապրող ժողովուրդները յանկարծ նոր դէմք ու նոր բնութիւն առած են և իբրև վայրի գազաններ կը լափեն զմեզ:

Աշխարհ կը նայի այժմ մեր ազգին իբրև ահաւոր արկածի հանդիպած անհատի մը, որ, օրինակի համար, վագրէ մը կամ արջէ մը փարատուած, կամ որուն վրայէն շոգեկառքի կառախումբ անցած լինի: Արդեօք մեռա՞ծ է խեղճը թէ ողջ, շուրջը կը խռնուի բազմութիւնը և կարեկից հետաքրքրութեամբ կը հարցնէ կը քննէ—մեռա՞ծ է թէ ողջ:

Այդպէս կը հարցնեն ազգերը—ջարդերու այն երկարաշար անցքէն յետոյ՝ արդեօք հայութիւնը մեռա՞ծ է, կամ եթէ դեռ չէ մեռած, արդեօք մահացո՞ւ են վէրքերը:

Աւելի խորագոյն անձկանօք քան այդ օտար ազգերը՝ մեր իսկ նախնիք, մեր ազգային հայրապետք ու բարերարք, մեր ազգի ծնիչն Հայկ, և փառաւորիչն Տիգրան Մեծ, ու Հայաստանի Լուսաւորիչն Գրիգոր, և հայ գրերու գտիչն Մեսրոպ, և հայրապետքն Ներսէս և Շնորհալի, մեր ազգային բոլոր մեծ փառքերն ու մեծ բարերարներն, կը հարցնեն թէ մեռա՞ծ է Հայութիւնը· նոցա Հոգին, սգաւոր և տխրամած, կ՚իջնէ Հայաստանի վրայ իբրև հայր մը որ կը խոյանայ իւր արկածեալ զաւկին վրայ, կը նայի, կը զննէ... ա՛հ, սիրտը կը բաբախէ՞, շունչ կ՚առնո՞ւ, ոտքն ու ձեռք ջախջախուած են, արդեօք գլո՞ւխը, արդեօք սի՞րտը ինչպէս են... օ՛, այո՛, սիրտը կը թնդայ, հոգի կայ վրան, կ՚ասէ հայրը. վեր կ՚առնու զիւր սիրելի որդեակը և կը համբուրէ անոր ճակատը, կը գրկէ... Չէ մեռած, պիտի ապրի՛ որդեակս .:

Երի՛տասարդ, քու ճակատին է Հայկայ ու Լուսաւորչի այդ համբոյրը կաթոգին: Ծանի՛ր արժէքդ, գիտցի՛ր թէ Հայկ, Լուսաւորիչ, Ներսէս, Սահակ, Մեսրոպ, Տիգրան, Վարդան քու շուրջդ են հոգւով, և սիրով կը սեղմեն զքեզ իրենց գիրկը և կեանք տալ կը ջանան քեզի:

Քու արժէքդ բազմապատկուած է ջարդերէն ի վեր. եղբայրներդ մեռան, անոնց ամենուն տեղը դու պիտի բռնես. երկու, երեք, թերևս տասն երիտասարդի գործ ունիս կատարել, և ուրեմն տասն երիտասարդի արժէք ունիս:

Թերևս ամուսնացած չես. բայց այրիներ ունիս, և որբեր ալ, որոնք քենէ հաց և զգեստ և կրթութիւն կը խնդրեն

Ամեն Հայ և ամեն հայուհի քանի մը հօր կամ քանի մը մօր գործն ունի իւր վրայ ծանրացած: Անօրինակ կոտորածոց տարիներուն կը յաջորդէ ուրեմն անօրինակ գործունէութեան, անհուն համբերութեան և գերմարդկային իմն տոկունութեան շրջան մը մեզի համար:

Բագոնի ամենէն խորիմաստ և գեղեցիկ մէկ խօսքն է թէ «Ստուգիւ, առաքինութիւնը անուշաբոյր հիւթի նման է, ամենէն սաստիկ կը բուրէ երբ կը ծխուի կամ կը ճմլուի· վասն զի յաջողութիւնը ամենէն լաւ կը ծառայէ զմոլութիւն երևան հանելու, իսկ ձախորդութիւնն ամենէն լաւ երևան կը հանէ զառաքինութիւն 1 :»

Մեր ազգն ալ ամենասաստիկ կերպով ճմլուած լինելով իւր խորագոյն խոռէն երևան կը հանէ իւր ներքին բնութիւնը, իւր բոլոր առաքինութեանց անուշահոտութիւնը և կը բուրէ բոլոր աշխարհ:

Դուք, Ո. Հօպօքընի երիտասարդութիւն, դուք իբրև մասն և անդամք հայութեան, կը սփռէք այս գաւառին մէջ ձեր հոտը. և կը հաւատամ թէ անոյշ և զմայլելի հոտ ու համբաւ մը կը սփռէք:

Այսպէս կը հաւատամ այն պատճառաւ որ Լսարան հիմնարկելու ձեռնարկած էք, և բազմութեամբ եկած էք այդ հիմնարկութեան նուակատիքին: Հասկցած էք ուրեմն թէ կարենալու համար պէտք է գիտնալ, և գիտնալու համար հարկ է լսել, իմանալ:

Մեր մէջ վերջ գտնելու կը միտի այն անմիտ կարծիքը թէ ամենէն մեծ առաքինութիւնը և յաջողելու առաջին պայմանը համարձակութիւնն է, յանդգնութիւնը:

Մուհամմէտի համար կը պատմեն թէ անգամ մը յայտարարած է հաւատացելոցը թէ բլուր մը պիտի կոչէ իրեն և անոր գագաթէն աղօթք պիտի կարդայ: Ժողովուրդը կը խռնուի հրաշքը տեսնե-

---

1 Տես Baconի OF ADVERSITY երկը:

լու։ Մուհամմէտ կը կանչէ բլրոյն, և բլուրը··· չի գար (ծիծաղ·) երկրորդ անգամ կը կանչէ, և բլուրը տեղէն չի շարժիր (ծիծաղ·) երրորդ և վերջին անգամ մ'ալ կը կանչէ և ահա բլուրը··, նստած կը մնայ (ծիծաղ։) Մուհամմէտ սակայն առանց ամօթահար լինելու, առանց չփոթուելու, կ'ասէ· «Եթէ բլուրը չի գար առ Մուհամմէտ, Մուհամմէտ կ'երթայ բլուրին։» (ծիծաղ շատ։)

Թէ վաւերական է այդ պատմութիւն, չգիտեմ ես· հաւանական է որ Մուհամմէտ՝ վար չնկատուելու համար քան ուրիշ մարդարէներն որոնք հրաշք գործած էին, փորձեց ինքն ալ դոնէ մէկ հրաշք գործել։

Բայց գիտեմ այդպիսի ուրիշ պատմութիւններ կատարելապէս վաւերական։ Գիտեմ Հայեր որք հրաշք գործել ուզեցին և չյաջողեցան։ կը ճանչնամ հայ գործաւոր մը որ ասաւ ինքն իրեն «փոքր դրամագլուխ մը ունիմ և մեծ ալ գլուխ մը, ինչ՞ով պակաս եմ սա վաճառականներէն· ես ալ գորգի վաճառական կը լինիմ։» Եւ համարձակեցաւ իջնել վաճառականութեան ընդարձակ և փայլուն ասպարէզը, յորմէ սակայն յուսահատ քաշուիլ ստիպուեցաւ քանի մը ամիս վերջը։

Առանց սովրելու գիտնալը հրաշք է, այո՛։ Ոչ ոք կը մտածէ դերձակութեան կամ կօշկակարութեան կամ ժամագործութեան ձեռնարկել իրրև վարպետ՝ առանց տարիներով աշակերտած և վարժուած լինելու, բայց վաճառական, կամ խմբագիր կամ վարժապետ լինելու շատեր կը համարձակին մեր մէջ առանց արժանաւոր պատրաստութիւններու, վասն զի պատրաստութեանց հարկը այդ կարգի գործերու համար այնքան ակներև չէ վերի վերոյ դիտողի մը համար։

Հայրենասիրական եռանդով կռուիլն ալ աղնիւ բան է, բայց հայրենասիրական եռանդը զինուորական կրթութեան տեղը չի կրնար բռնել· զինուոր լինելու համար պէտք է զինուորութեան կրթուիլ։

Նոյնպէս և հայրենասիրական եռանդն հանդերձ բաղում համարձակութեամբ չի բաւեր երիտասարդ մը յեղափոխութեան առաջնորդ կամ ազգային քաղաքական գործոց ղեկավար անել։

Այս մասին ալ Պագոն իմաստասէրը թող խօսի։··

«Նախ և առաջ ի՞նչ (պէտք է)·—համարձակութիւն· ե՞րկրորդ, ե՞րրորդ ի՛նչ պէտք է·—համարձակութիւն· և սակայն համարձակութիւնը նգիտութեան, ցածութեան զաւակն է···, բայց և այնպէս կը հրապուրէ և ոտքն ու ձեռքը կը կաչկանդէ անոնց որք կա՛մ ծանծաղ են դատողութեան մէջ կամ տկար են քաջութեան կողմէ։

Համարձակութիւնը միշտ կոյր է, վասն զի վտանգներն ու անպատեհութիւններն չի տեսներ· վասն որոյ խորհրդակցութեան մէջ վնասակար է, գործադրութեան մէջ օգտակար· հետևապէս համարձակ մարդիկը պէտք է գործածուին ոչ երբէք իրրև պետ որ հրամայեն այլ իրրև երկրորդ՝ ուրիշներու առաջնորդութեան ներքև· քանզի խորհրդակցութեան մէջ լաւ է տեսնել վտանգները, և իգործադրութեան՝ չտեսնել զանոնք բայց միայն երբ շատ մեծ են։» (Տես OF BOLDNESS)

Ձեր մտածութեան կը յանձնեմ այդ խօսքերը։

Ճշմարտութիւնը զոր կը բաղձամ քաջ տպաւորել յարգելի ունկնդիրներուս վրայ է սա—պատճառ և արդիւնք իրարու կը համապատասխանեն· ինչ արդիւնք որ կուզենք յառաջ բերել, հարկ է որ անոր համեմատ զօրութիւն գործածենք։ Արծաթը 1000 ջերմաստիճանի տաքութիւն կը պահանջէ հալելու համար, երկաթը՝ 1500 աստիճան, լոնոսկին 2000· արդ եթէ մէկը ուզէր արծաթի կտոր մը հալեցնել միայն 500 աստիճան կամ նոյն իսկ 999 աստիճան ջերմութիւն տալով՝ այդ կը լինէր հրաշագործութիւն փորձել։ Նոյնպէս հրաշք կը լինէր եթէ մէկ քաջ ոսկիով երկու կամ երեք քաջ ծանրութեան ճնշումը յառաջ բերել ուզէինք։ Ճիշդ այդպէս ալ, և հոս է խօսքիս հոգին, հրաշքի փորձ մը կը լինէր եթէ մէկ երիտասարդը երկու կամ երեք երիտասարդի ոյժ կամ արժէք կամ կշիռ ունենալ ուզէր։ Ուրեմն երբ կ'ասեմ թէ հայութեան ներկայ պայմաններուն տակ մէկ երիտասարդը երկու երիտասարդի գործ և պարտաւորութիւն պիտի կատարէ, հրաշք պիտի գործէ ասել չեմ ուզեր, այլ թէ պիտի չանայ կրկնապատկել իւր կարողութիւնը որով պիտի կրնայ երկուքի բեռ տանիլ։

Դիցուք թէ մարդու մը երկու երիկամանց մին կարուի իբաց կամ այլապէս չքանայ. միւս երիկամն միայնակ կը կատարէ երկու երիկամանց գործը, բայց ի՞նչպէս, միթէ մնալով ինչ որ էր առ՞աջ —ո՛չ, այլ կը մեծնայ, առջի չափերը գրեթէ կը կրկնապատկուին, հետևապէս և կարողութիւնը։

Այդպէս և երիտասարդ մը որ երկու երիտասարդի գործը պարտաւոր է կատարել, պարտի մեծնալ, աճիլ բարոյապէս, որպէս զի երկուքի կարողութիւն ունենայ։

Եւ աճիլ առանց սնունդի, այդ ալ հրաշք կը լինէր, այսինքն անհնարութիւն։

Ի՞նչպէս պիտի աճիս դու, երի՛տասարդ, ի՞նչպէս պիտի սնանիս։ Լսելով ճշմարտութիւնը, և օրհնեալ ես դու որ կը հիմնարկես լսարան և կը յաճախես լսարան—որ ախորժակ ունիս բնութեան օրէնքները սովրելու, պատմութեան և այլ սննդարար ուսմանց սեղանէն փորդ կշտացնելու, որպէս զի մեծնայ միտքդ, ընդարձակին խորհուրդներդ. զօրանայ սիրտդ. և այդպէսով կարող լինիս երկու, երեք և աւելի երիտասարդի գործը կատարել։

Ամենէն բարի, ամենէն առաքինի, ամենէն զօրաւոր և դիմացկուն Հայերը հիմա, այս շրջանիս մէջ երևան պիտի գան մեր ազգին մէջ։

Ժամանակիս պահանջն է այս։

Մեր ազգային մեծ փառքերուն և մեծ բարերարներուն, Հայկայ, Լուսաւորչի, Մեսրոպայ մաղթանքն է այս։

Մեր ամենուն յոյսն և մեր ամենուն ջանքն է այս։

Կեցցէ Ո. Հօպօքընի հայ երիտասարդութիւնը. կեցցէ հայ երիտասարդութիւնը ամեն ուրեք։

(Կրկին ծափահարութիւնք։)

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

ՑԱՌԱՋԻԿԱՑ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ ՄԵԾԱԳՈՅՆ ՆԻՒ ԵՈՐԿՈՒՄ

Ցառաջիկայ նոր տարւոյ առաջին օրէ սկսեալ այժմու Նիւ Եորկ քաղաքի պիտի կցուին և միացուին հանդիպակաց և շրջակայ Բրուկլին քաղաքն, արևմտեան մասն Կուինս գաւառի, և Ռիչմոնտ գաւառն և պիտի լինին միևնոյն քաղաքային վարչութեան տակ։ Երբ նոր քաղաքային մարմինն, որ պիտի կրէ ծանօթ the City of New York անունն, այսպէս կազմակերպուի, ընակչօք պիտի լինի երկրորդ մեծագոյն քաղաքն աշխարհում։

Այս մեծ քաղաքի պաշտօնեաներն պիտի ընտրուին եկող Նոյեմբերին։ (Նախ, մի Քաղաքապետ, մի Վարիչ Ելեմտից և մի Նախագահ Քաղաքային Խորհրդեան (President of the Council) պիտի ընտրուին ընդհանուր քուէով ամբողջ քաղաքաբաշխութենէն։ Պիտի ընտրուին նաև մի թաղային Նախագահ (President of Borough) իւրաքանչիւր թաղում, անդամներ Քաղաքային Ժողովոյ և Տեղական Մասնաժողովոյ իւրաքանչիւր թաղի և Գաւառային Պաշտօնեաներ իւրաքանչիւր գաւառում։)

Գրեթէ ամբողջ Ամերիկեան ժողովրդեան ուշն այժմ կեդրոնացած է այս մեծ քաղաքամօր Ներկայ Ընտրական պայքարին վրայ։

Կարևորութիւնն այս ընտրութեան. կանուխ գրգռեց քաղաքական կուսակցութիւններն ի գործունէութիւն։ Ցարդ երկու մեծ Ազգային կուսակցութիւններն, Դեմոկրատիկ և Ռիպըբլիկան, սեփականած էին ասպարէզն և միմեանց հետ կը մրցէին յափշտակելու տեղական պաշտօններն։ Իւրաքանչիւր կուսակցութիւն կը յենուր և հաստատէր իւր պահանջն կառավարելու զքաղաքն իւր ազգային քաղաքականութեան վրայ։ Սակայն սոցա սկզբունքն և եղանակներն կառավարելու զքաղաքն չէին տարբերեր։ Ընդհակառակն, երկոցունց տեսութիւնն և գաղափարն ևս զքաղաքն կառավարելու միևնոյնն եղած է—այսինքն թէ քաղաքային պաշտօններն են վարձատրութիւններ կուսակցական ծառայութեանց, պարտին լեցուիլ անոնցմէ որ աշխատած են կուսակցական յաջողութեանն համար, և պարտին գործածուիլ զօրացնելու համար

զկուսակցութիւնն և սորա տեղական կազմակերպութիւի և տևացնելու համար այս վերջնայն պաշտօնավարութիւն։

Ինչպէս ակնկալելի է՝ եղած է միշտ մի ստուար ժողովուրդ որ բողոքած է ընդդէմ այս քաղաքային զեղծմանց, ընդդէմ միջամտութեան քաղաքական մարմնոց՝ քաղաքային գործերում։ (Այս զգացման իբր արդիւնք, դոյացած են փոքր անկախ կազմակերպութիւններ որ երբեմն անուանած են անկախ թեկնածուներ կամ վաւերացուցած են այն «կանոնաւոր» թեկնածուներ որ խոստացած են բարւոք վարչութիւն։) Երբեք տարի առաջ երբ այս Տերութեան (Նիւ Եորկի) Սահմանադրութիւն կը նորոգուէր, ժողովուրդն յաւելցուց մի յօդուած որով յետայսու տեղական ընտրութիւնք (քաղաքային և գաւառային) տեղի պիտի ունենան տարբեր ժամանակ որպէս զի տեղական խնդիրներ չ՝ազդեն ազգային և տերութենական (քաղաքական) ընտրութեանց, և ազգային և տերութենական խնդիրք չ՝ազդեն տեղական ընտրութեանց, այլ որպէս զի իրաքանչիւրի ընտրութիւնները կատարուին իւր ուրոյն խնդրոց արժանեաց նկատմամբ միայն։

«Քաղաքացւոց Միութիւն» (Citizens Union) կազմակերպուեցաւ վերջին Մարտ՝ ամսում որպէս զի կատարէ Նիւ Եորկ քաղաքում յիշեալ տրամադրութիւնն Նիւ Եորկի Նոր Սահմանադրութեան։ (Երկրորդ յօդուածն Ցայտագրոյն սոյն Միութեան այսպէս կը յայտարարէ Միութեան դիրքն— «Մեք կը պահանջենք որ գործերն Նիւ Եորկ քաղաքի վարուին անկախաբար ազգային և տերութենական քաղաքական խնդիրներէ, և որ տեղական պաշտօնեայք ընտրուին նկատի առնելով լոկ նոցա որպիսութիւններն։ Մեք պիտի անուանենք միայն այնպիսի թեկնածուներ որոց նկարագիրն և վարքն կ՝արդարացնեն հանրային վստահութիւն թէ, եթէ ընտրուին, պիտի չգործածեն իրենց պաշտօններն, ոչ ալ թողուն այլոց գործածել զայնս, յօգուտ և է քաղաքական կուսակցութեան, այլ պիտի վարեն զայնս ամեն կերպիւ ըստ սկզբանց Ցայտագրոյս»։

Բիպըբլիկանաց տեղական ջոջերն կամ «մեծ աղաներն»—Ամերիկայում ևս կան «մեծ աղաներ»—գիտնալով թէ առանձին չեն կարող չհիլ ընտրութիւններն, կանուխ սկսան բանակցիլ Քաղաքացւոց Միութեան հետ որպէս զի Միութենական թեկնածուներ ունենան «բարւոք կառավարութեան համար» ընդդէմ «Տամանի Հօլ»ի, որ է տեղական Դեմոկրատիկ կազմակերպութիւնն։ Սակայն «Քաղաքացւոց Միութիւն» սկզբունքով հակառակ «քաղաքական սակարկութեանց», և ուրացող Բիպըբլիկանաց որպէս և Դեմոկրատիկաց իրաւանց միջամտելու քաղաքային գործերում, մերժեց ոևէ յարաբերութեանց մտնել, և առանց նկատելու Բիպըբլիկան բողոքներ, յորդորներ կամ սպառնալիքներ, իւր գործոյն հետևեցաւ և անուանեց իրր թեկնածու քաղաքապետութեան Նիւ Եորկ քաղաքի զՍեթ Լօ, (Seth Low)։

Սեթ Լօ անձ մ՝է որ Նիւ Եորկի տասնեակ նշանաւորագոյն և մեծագոյն արանց մէջ դիրաւ առաջնակարգ տեղ մի կը գրաւէ։ Երկիցս ընտրուած է Քաղաքապետ Բրուկլին քաղքի տալով այդ քաղքի մի վարչութիւն որ ցայսօր եղած է անոր մի պարծանքն։ Իրր տասն տարիներէ ի վեր կը վարէ գործերն Կոլըմբիա Համալսարանի իրրև սորա նախագահն, զայդ այդ ասպիճանին և իւր ներկայ համբաւին բերելով՝ իւր նախկին աննշան դիրքէն։ Ճէյմս Բրայս կը վկայէ նկատմամբ անոր հեղինակութեան՝ քաղաքային վարչական խնդիրներում։ Լաւագոյն թեկնածու մի անուանել Նիւ Եորկի քաղաքապետութեան անհնար էր։ Այս մասին տարօրինակ համամտութիւն կայ մինչ իսկ առ նոսա որք քաղաքական կամ շահախնդրական պատճառանօք նմա կը հակառակին։

Պլատ, Բիպըբլիկան «մենծ աղան», որ, պատրուակելով «միութիւն բարւոք կառավարութեան» համար, կը դաւադրէր կցելու համար Քաղաքացւոց Միութիւնն իրրև Բիպըբլիկանաց պոչն, տեսնելով որ իւր խաղն անյաջող եղաւ, անուանեց քաղաքապետութեան թեկնածու զԲենիամին Ֆ. Տրէյսի, նախկին Քարտուղար Ծովային Գործոց, որ անձնապէս մի յարգելի մարդ է, սակայն անընդունելի է իրրև Պլատայ սանն և գործիքն։ Կրօկըր, Դեմակրատիկ «Մենծ աղան», անուանեց զՌոպերդ Ա. Վէն—Վայկ, մի միջնակարգ դատաւոր (ինչպէս յօդուածագիրն փորձառութեամբ կը վկայէ) մի միջնադաս

դատարանի։ Մի ուրիշ Դեմոկրատիկ կազմակերպութիւն անուանեց զՀէնրի Ճորճ, մի հասարակ անձն որոյ տնտեսական հայեցուածոց խրթնութիւններն շահած է հետևողութիւն չհասկցող տերոյն։

Մեծագոյն Նիւ Եորկում այսօր կան աւելի քան հազար և երկու հարիւր Հայեր, յորոց մէկ քառորդն հաւանաբար են քաղաքացիներ։ Թէ որո՛ւ արուած լինին այս փաքրաթիւ քուէներն թերևս տարբերութիւն չգործէ նկատմամբ արդեանց ընտրութեանց, սակայն յոյժ կարևոր է անձնիւր Հայ քաղաքացւոց համար թէ ինչպէս կը կատարէ իւր քաղաքացիութեան պարտիքն։ Հազար երկու հարիւր Հայերն որ հոս կը բնակին իրաւունք ունին վայելելու լաւագոյն քաղաքային վարչութիւնն որ կարելի է և ակնկալելու որ այն Հայերն որ կարող են քուէարկել օգնեն այդպիսի վարչութեան հաստատման։ Ո՞ր թեկնածուներն են որոց խոստմանց կրնանք վստահիլ—քանզի ամենքն ալ կը խոստանան «բարւոք կառավարութիւն»։ Բարեբաղդաբար թէ Ռիպըբլիկան և թէ Դեմոկրատիկ քաղաքային վարչութիւններն յաճախ փորձուած են և հաւասարապէս զեղծ ու անարժան գտնուած են։

Միայն մի կազմակերպութիւն կայ որոյ թեկնածուներն արժանի են վստահութեան, այն է Քաղաքացւոց Միութիւն։ Թող ամէն քաղաքացի իւր պարտք կատարէ և Նիւ Եորկի յաջորդ քաղաքապետն պիտի լինի Հայոց մեծ բարեկամն, Սեթ Լօ։

Ս. Գ. Քէպապեան։

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՑՈՑ

Ի Գ. Սըմիթ, Summit, N. J.

Տեղւոյս հայ գաղթականութիւնը 35 հոգի է։ 13 Խարբերդցի (2 տուն) 7 Այնթապցի (մէկ տուն), 14 Արաբկերցի (1 տուն), և մէկ Մալաթիացի։ Հինգը դըպրոց գնացող են, 3 աղջիկ ու 2 մանչ։ 22 ը գործաւոր են մետաքսի գործի մէջ, և ութ հոգի ալ տան գործով կը զբաղին։

Մ. Ց. ԶՐԹԱՖԵԱՆ

***

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Հոկտ. 23 ի չարաթ երեկոյին Նորէն Նիւ Եորքի Հայերը ժողովեցան վերջնական կազմակերպութիւն մը տալու Բարեգործական Ընկերութեան։ Ազգային մը ատենապետ ընտրեցին, և ամենքն միասին երգ մը հնչեցուցին։ Ապա Ուիլիամ Գաբրիէլեան արտասանեց «Ազատ Աստուած»ը։ Տիար Միհրան Զուգասզեան նօթ մը երգեց։ Բուն գործին գալով՝ նախորդ նստի արձանագրութիւնը կարդացուեցաւ և վաւերացաւ։ Տօքթօր Գաբրիէլեան ժողովոյն տեղեկագրեց ամէն ինչ որ արած էր կազմակերպիչ մասնաժողովը վերջին ընդհանուր ժողովէն ի վեր—այսինքն,

1. Ընտրուած էին Դիւանի անդամներն.

2. Դիւանը աշխատեր էր կազմել խընամակալութիւն մը 12 Ամերիկացի և 12 Հայ անդամներով, որք իրենց ազդեցութեամբ պիտի օգնէին այս ձեռնարկի յաջողութեանը։

3. Որոշած էին որ թոշակաւոր քարտուղար կամ գործիչ չունենային և ծախքեր անել չսկսէին մինչև որ 500 տոլարի գումար մը պատրաստ չլինէր գանձին մէջ։ Այս գումարը կը յուսային գոյացնել մէկ ամսուան մէջ։

4. Որոշեր էին խնդրել որ մասնախումբ մը ևս կազմուէր իբրև Դիւանին աջակից, որուն պաշտօնը լինէր ընկերութեան անդամները բազմացնել և չաբաթավճարներն հաւաքել։

Ի մի բան, Դիւանը մտածեր էր թէ Ընկերութեան ամուր և արդիւնաւոր կազմութիւն մը տալու համար հարկ էր լաւ հիմանց վրայ դնել զայն, ուստի և իրմէ վեր խնամակալութիւն մը և իրեն աջակից ցանձնախումբ մը կ'ուզէր ունենալ։

Տեարք Եէշիլեան և Հայկունի ևս խօսեցան այսպիսի ընկերութեան մը կարևորութեանը և գործելու սկզբանցը վրայ։ Ապա ատենապետը քուէարկութեան ենթարկեց Դիւանի անդամոց անուններն և անոնց բերած առաջարկութիւններն, որք ամբողջութեամբ ընդունուեցան 4 ի դէմ

ՉՉ քուէով:

Իսկոյն չարաթավճարներն հատուցանել սկսան անդամք և ժողովը աւարտեցաւ յաջողութեան յուսով քաջալերուած:

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Տիար Ս. Երկանեան, որ Բարիզի Գեղարուեստից Վարժարանի պետէն վկայագիր ունի, հասած է ի Նիւ Եորք և պատրաստ է ազգայնոց պատկերը չինելու, սև թէ գունաւոր, լուսանկարէն օրինակելով թէ բուն անձին նայելով: Շատ չափաւոր են գները: Իւր հասցէն է 154 E 27րդ. փողոց:

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ՀԻՒՐԱՆՈՑ

ԼԱՆԹԷԼՄԻ

Նախաճաշ	40 սէնթ
Կէս աւուր ճաշ	40 սէնթ
Ընթրիք	75 սէնթ

Գինւով մէկտեղ

Սենեակի վարձք Հօթէլին մէջ

օրը 75 սէնթ

40 Union Square (East side) bet. 16th & 1.7th sts.

ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ԵՂԲԱՐՔ

22 Bergenline Ave, Union Hill, N. J.

Եունիըն Հիլ, ՆՈՒ ՃԸՐՋԻ

Այս վաճառատան մէջ կը ծախեն անհաւատալի աժանութեամբ մահճակալ (bed—stead), կարպետ, մոմազօծ կտաւ (oil—cloth) և flanolium), պատկերի շրջանակ և պատկեր, աթոռ, նստարան, սեղան և այլ տնական կահ կարասի: Նաև կը գործեն կարպետ (rag carpet):

Կը փափաքինք ունենալ rag carpet գործող փորձ ոստայնանկ մը հայազգի. դիմել վերոյիշեալ հասցէին:

JOHN C. MORRISON

Յ. Ս. ՄՕՐԻՍԸՆԻ

ԴԵՂԱՐԱՆԸ

Կը գտնուի ի Թիւ 262 Ութերորդ Էվընիւ, Մեծ Օբէրային հանդէպ, 23 և 24 րդ փողոցներուն միջև:

Վստահելի դեղեր, բանաւոր գներով կը ծախենք:

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ.ի տպարանում, 1892ին: Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, չրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած և ն. և ն.: Երկրորդ մասում կ'աւանդէ «ԱԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ:» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ կրենք գիրենք մարզել պարտին եր երիտասարդք: Գին 50 սէնթ:

***

FACTS ABOUT ARMENIA

This pamphlet contains a report of the Sassoon massacre by a native refugee, the great Chester speech of Mr. GLADSTONE on Armenia and the renowned article of Dr Dillon on the fearful condition of Armenia for many years before the late massacres.

Price 15 cents.—To write to the Editor of HAIK, 341 W. 23d St.

***

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

OUR TROUBLES IN ASIA

(2 Corinthians, I. 8)

A Story of Persecution

By

SARKIS H. DEVIRIAN

A native Armenian Pastor.

1897, pp. 183.

Հեղինակի հասցէն է—258 Washington St. Binghamton, N.Y.

Գրքի գինն է մէկ տոլար:

Հայքի ներկայ թուոյ մէջ հրատարակուած «Հայ Թագաւորաց Պատկերն» յիշեալ գրքին մէջ դրուածին օրինակն է:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ